ԸՆԴԴԻՄՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԵՐՆ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՐԳՈՒՄ

Արտակ Բաղդասարյան

Ներածություն

Ժողովրդավարացման գործընթացի զարգացման աստիճանը կարելի է որոշել մի շարք չափորոշիչներով, որոնցից մեկն էլ ընդդիմությունն է: Ընդդիմադիր կուսակցությունները և շարժումները ժողովրդավարական քաղաքական համակարգի անբաժանելի մասն են, և երկրում ժողովրդավարության մակարդակը կարելի է գնահատել գոյություն ունեցող ընդդիմության բնույթի և գործունեության վերլուծության միջոցով, որով էլ կարելի է որոշել այդ երկրի զարգացման ուղղվածությունն ու կանխագուշակել վարչակարգի հետագա հնարավոր զարգացումը՝ իշխանության և ընդդիմության միջև յուրահատուկ փոխհարաբերությունների միջոցով:

Քննության առնելով հետխորհրդային երկրների ժողովրդավարացման գործընթացները՝ տեսանելի է, որ սկզբնական շրջանում այս պետություններում ընդդիմությունը լոկ ֆասադ էր, և հետո միայն որոշ պետությունների քաղաքական համակարգում այն դարձավ կառուցվածքային, բայց դեռևս չինստիտուցիոնալացված կառույց (միավոր): Այդ երկրներում ընդդիմությունը ձևավորվեց անցումային ժամանակաշրջանում, և քանի դեռ ժողովրդավարացման գործընթացն ամբողջությամբ ավարտված չէ, ավարտված չէ նաև ընդդիմության՝ որպես ժողովրդավարական ինստիտուտի, կայացման գործընթացը: Այնուամենայնիվ, այդ երկրներում որոշակի ընդդիմադիր ուժեր կան, որոնք տարբերվում են գաղափարախոսական, էթնիկ, կլանային, տարածքային, կրոնական և այլ ուղղվածությամբ: Չնայած ՀՀ-ում ընդդիմությունը դեռևս այն ուժը չէ, որ կարողանա էական ազդեցություն ունենալ կարևոր որոշումների ընդունման վրա, այնուամենայնիվ, այն ձևավորված է և շարունակում է զարգանալ՝ ձգտելով դառնալ այն այլընտրանքային միավորը, որը կկարողանա իրական մրցակցային ուժ ներկայանալ ոչ միայն ընտրությունների ժամանակ, այլև իրապես ներգրավված լինելով օրենսդիր մարմնում՝ վերահսկել իշխանության գործունեությունը և իրական հակակշիռների համակարգ ներկայացնել կառավարող համակարգին, որով էլ կնպաստի երկրի ժողովրդավարացման գործընթացի արդյունավետ ավարտին:

1. Ընդդիմություն և ժողովրդավարություն

Քաղաքական ընդդիմության առկայությունը ժողովրդավարության հիմնական և էական առանձնահատկություններից մեկն է: Քաղաքագետ Ռոբերտ Դալն իր դասական աշխատություններում ընդդիմության առկայությունը համարում է պոլիարխիայի (ժողովրդավարության) գոյության անհրաժեշտ ու պարտադիր պայման և նշում դրա վրա ազդող փոփոխականների մի ամբողջ շարք: Նա ներկայացնում է պոլիարխիայի անհրաժեշտ պայմանները, որոնք ամբողջությամբ կապված են ընդդիմության՝ որպես յուրահատուկ քաղաքական ինստիտուտի, առկայության հետ[1]: Այդ պայմաններից Դալն ընդգծում է աջակցության և քվեարկության համար մրցելու իրավունքը, ինչը ենթադրում է, որ ընտրողներն ընտրովի պաշտոնի համար պայքարող քաղաքականության սուբյեկտների զանազան առաջարկություններից ընտրություն կատարելու որոշակի այլընտրանք կունենան կամ ունեն: Դա իր հերթին ենթադրում է հայացքների որոշակի հեռավորություն. դրանք տարբերվում են միմյանցից կամ համընկնում են, ինչը համարժեք է որոշակի շարունակական անհամաձայնության կամ միևնույն խնդրին վերաբերող հակադիր կարծիքների առկայության: Սա, իր հերթին, կարևոր է ընդդիմության առկայության համար:

Մեկ այլ չափանիշ է տեղեկատվության այլընտրանքային աղբյուրների և դրանց գործունեությունն ապահովող օրենքների առկայությունը[2]: Այլընտրանքն այս դեպքում ենթադրում է ոչ միայն տարբերվող բովանդակություն, այլև դեպքերի և քաղաքականության այլ մեկնաբանություն:

Ընդդիմության հետ կապված՝ ժողովրդավարության, այսպես կոչված, հողող սահմանում են տվել Շմիտերը և Կարլը[3]: Ժողովրդավարությունը սահմանելիս նրանք օգտագործում են հաշվետվության չափանիշը. ենթադրվում է ղեկավարող կամ ստուգող գործառույթներով օժտված որևէ պաշտոնական կամ ոչ պաշտոնական կառույց, որը պետք է ղեկավարվի հակադիր հայացքների տեր մարդկանց կողմից: Բացի այդ, Կարլը և Շմիտերը օգտագործում են ընտրված ներկայացուցիչների փոխաջակցության և համագործակցության գաղափարը, ինչն իր հերթին ենթադրում է այլընտրանքի (մրցակից հայացքների) առկայություն:

Կարելի է նշել ժողովրդավարության բազմաթիվ սահմանումներ, որոնցից յուրաքանչյուրում կհանդիպենք այնպիսի հասկացությունների, ինչպիսիք են աջակցություն, համագործակցություն, իշխանություն, մրցակցություն և այլն, որոնք նախապես ենթադրում են հակադիր տեսակետներ: Ավելին, վարչակարգում ժողովրդավարության մա-

[1] Տե՛ս Dahl, Robert, Polyarchy: Participation and Opposition. New haven and London: Yale University Press, 1971, p. 15.
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 17:
[3] Տե՛ս Schmitter, Phillipe and Terry Lunn Karl, What Democracy is…And Is Not. Journal of Democracy 2(3), 1991, p. 75-88.

կարդակը կարելի է գնահատել գոյություն ունեցող ընդդիմության բնույթի ու գործունեության միջոցով, ինչը կարող է չափվել, օրինակ, քաղաքական պլյուրալիզմի որոշակի մակարդակի առկայությամբ:

2. Ժողովրդավարական ընդդիմությունն անցումային վարչակարգում

Վարչակարգերն ըստ տիպաբանության դասակարգելիս Լինսը և Ստեփանը օգտագործում են չափանիշները որպես որոշակի տիպի վարչակարգի հիմնական տարբերակիչներ[1]: Վարչակարգերի դասակարգումը կարող է կատարվել ինստիտուտների տարբեր մակարդակներում պլյուրալիզմի մակարդակի և հասարակական կյանքի ոլորտների միջոցով: Մակրոմակարդակում պլյուրալիզմը կարող է դրսևորվել պառլամենտի առկայությամբ, մեզոմակարդակում՝ հակադիր հայացքներ և տեսակետներ արտահայտող քաղաքական կուսակցությունների առկայությամբ, միկրոմակարդակում՝ քաղաքացիների տարբեր քաղաքական նախապատվությունների գոյությամբ, ինչն ընդդիմության առկայության կամ ստեղծման որոշակի հիմքեր կստեղծի: Մակրոմակարդակում ինքնակալ վարչակարգերը լավագույն դեպքում ունեն ձևական պառլամենտ. կուսակցությունները (եթե թույլատրված են), որպես կանոն, խամաճիկներ են՝ ստեղծված վերևների կողմից, և զանգվածները վարչակարգի ճանաչման մակարդակում ոչ մի այլընտրանք չեն քննարկում և չի թույլատրվում: Իսկ գերակայող գաղափարն այն է, որ ցանկացած ժամանակահատվածում տիրող վարչակարգը երկրի համար ամենաօպտիմալն է: Երբեմն քարոզչությունը փորձում է ընդլայնել վարչակարգի ազդեցության ոլորտները և հաջողության դեպքում տարբեր մակարդակներով ու ուղիներով այն զարգացնել նաև այլ երկրներում:

Վարչակարգը կարելի է գնահատել և մասնակիորեն սահմանել իշխանության և ընդդիմության հարաբերությունների միջոցով: Այդ հարաբերությունները որոշակի շարունակական/*continuum*-ի անհանդուրժողականության և հանդուրժողականության սահմաններում են, որին կարող են բնորոշ լինել.

1. ամբողջական անհանդուրժողականությունը և հարաբերությունների բացառումը,
2. մասնակի հանդուրժողականությունը կամ հանդուրժողականությունը (ներառում որոշ ոլորտներում),
3. հանդուրժողականությունը քաղաքական ոլորտում, երբ ընդդիմությունը կարող է առաջադրել որոշ խնդիրներ, բայց չունենա իրական ուժ և ազդեցություն,
4. որպես *continuum*-ի վերջին հատկանիշ՝ քաղաքական ընդդիմության՝ որպես հիմնական քաղաքական ինստիտուտներից մեկի, ներառվածությունը համակարգի մեջ:

[1] Տե՛ս Linz, Juan and Alfred Stepan, Problems of Democratic Transition and Consolidatoin: Southern Europe, South America, and Post-Communist Europe. Baltimore and London: The Jons Hopkins University press, 1996.

2 և 3-րդ կետերը կարող են բնութագրել վարչակարգի ազատականացման փուլերը և անցումային/ժամանակավոր վարչակարգերը:

Հարկ է նշել Ռ.Դալի քաղաքական հնարավորությունների մակարդակները, որից օգտվում է ընդդիմությունը.

1. քաղաքական նախապատվությունների ձևակերպում,
2. նախապատվությունների արտահայտում քաղաքացիների և կառավարության առջև,
3. ազդեցություն կառավարության քաղաքականության վրա[1]:

Յուրաքանչյուր մակարդակում պետք է լինեն որոշակի ինստիտուցիոնալ երաշխիքներ, որոնք թույլ կտան չափել տվյալ երկրում ընդդիմության ազդեցության մակարդակը: Այդ երաշխիքները ներառում են՝ կազմակերպությունների ազատություն և միավորումներ, արտահայտվելու ազատություն, քվեարկելու իրավունք, պետական գործիչների միջև հասարակության աջակցության համար պայքար/մրցակցություն, տեղեկատվության այլընտրանքային աղբյուրներ: Հաջորդ մակարդակներում որոշակի երաշխիքներ են ավելացված. ազատ և արդար ընտրությունների անցկացման հնարավորությունն առկա է, ընտրովի պաշտոնին հասանելիությունն ու կառավարության քաղաքականության վրա ազդեցությունը՝ հնարավոր:

Հիմնվելով ժողովրդավարական քաղաքական համակարգում ընդդիմության խաղացած դերի վրա՝ այդ ինստիտուտի վերլուծման խնդիրն առկա անցումային վարչակարգերի շրջանակներում կարող է ձևակերպվել հետևյալ կերպ. որո՞նք են ընդհանրապես ընդդիմության և հատկապես քաղաքական ընդդիմության հիմնական գծերը ժողովրդավարական համակարգերում ու անցումային վարչակարգերում, և ինչպե՞ս են դրանք տարբերվում: Ի՞նչ գործունեություն է ծավալում ընդդիմությունը, ինչպե՞ս և ի՞նչ ճանապարհով ընդդիմության գործունեությունը կարող է խթանել անցումն անցումային վարչակարգից համախմբված ժողովրդավարության, և ինչպիսի՞ քայլեր պետք է ձեռնարկվեն, որպեսզի ավարտին հասցվի համախմբման/կոնսոլիդացման գործընթացը: Որոշ նախնական պատասխաններ կարելի է գտնել Ստեփանի հոդվածում, որտեղ նա մատնանշում է ժողովրդավարական ընդդիմության խնդիրները և ֆունկցիաները, օրինակ՝ «դիմադրող ինտեգրացիա վարչակարգում, վարչակարգի օրինականության հարցի քննարկում և վստահության արժանի ժողովրդավարական այլընտրանքի ստեղծում»[2]:

Անցումային վարչակարգերում հնարավոր է նշել առկա, բայց վարչակարգի վրա ազդեցություն և մարտահրավեր նետելու հնարավորություն չունեցող ընդդիմության

[1] Տե՛ս Gelman, Vladimir, Трансформация в России: политический режим и демократическая оппозиция, Москва, 1999, Московский общественный научный фонд, с. 87-88.
[2] Տե՛ս Stepan Alfred, On the Tasks of a Democratic Opposition, Journal of Democracy 1 (2), 1990, p. 41-49.

առանձնահատուկ գծերը: Ընդդիմությունը կարող է լինել պառլամենտում, սակայն այդ ինստիտուտի դերակատարությունը, ինչպես նաև ազդեցությունը քաղաքական որոշումների ընդունման և իրագործման վրա սովորաբար սահմանափակ է: Մեզոմակարդակում իշխող կուսակցություն(ներ)ից բացի, կարող են լինել նաև ուրիշներ, բայց նրանց ազդեցությունը, ինչպես և գործունեության ոլորտը սահմանափակ են: Դա փոխկապված է միկրոմակարդակում հակադիր հայացքների արտահայտման հետ, որտեղ ժողովրդի քաղաքական նախապատվությունները դեռ բյուրեղացված չեն: Կարող է վիճելի լինել այն, որ տարբեր մակարդակներում ընդդիմության արտահայտման ընդհանուր միտում պետք է լինի. մի մակարդակում ներզարգացումը պետք է դրականորեն համաձայնեցվի մեկ այլ մակարդակի ներզարգացման հետ և հակառակը. որքան առողջ և ուժեղ է ընդդիմությունը տվյալ մակարդակում, այնքան ազդեցիկ և զարգացած է այն մեկ այլ մակարդակում:

Եթե այս տեսությունը դիտարկենք նախկին խորհրդային հանրապետությունների, այդ թվում և Հայաստանի Հանրապետության համատեքստում, ապա վերափոխման և ժողովրդավարական համախմբման հաջող ավարտը կարող է դիտարկվել և գնահատվել որպես հիմնական խնդիր, որը ինստիտուցիոնալացնում և մշակում է ընդդիմությունը որպես հստակ ինստիտուտ, որը գոյություն ունի քաղաքական համակարգի տարբեր մակարդակներում և ունի որոշակի կառուցվածք ու գործառույթներ:

Ժողովրդավարությունը ենթադրում է ոչ միայն մրցակցություն իշխանության և ընդդիմության միջև, այլև այս երկու կողմերի միջև դիրքերը փոխելու հնարավորություն:

Անցումային վարչակարգերում դեռևս չի բացառվում ղեկավարող էլիտայի փոփոխությունը ընտրությունների միջոցով: Էլիտայի կազմի փոփոխության դեպքում համակարգն ինչպե՞ս կշարունակի գործել և զարգանալ: Հնարավոր են երեք հիմնական այլընտրանք.

1. անցումային վարչակարգի պահպանում,
2. անցում ժողովրդավարության և համախմբման/կոնսոլիդացման,
3. վերադարձ ավտորիտար համակարգին/ինքնակալությանը:

Այստեղ խնդիրն այն է, թե ընդդիմությանն ինչպիսի հատկություններ են հարկավոր երկրորդ սցենարի զարգացման և երրորդի բացառման համար: Նման պարագայում հետաքրքիր են ընդդիմությունը բնութագրող այն հատկանիշները, որոնք այն դարձնում են կառավարության իրական մրցակիցը, ինչպես նաև ընդդիմության և իշխանության միջև հիմնարար տարբերությունների առկայության հարցը:

Համախմբված ժողովրդավարությունը բնութագրելիս կարելի է ընդգծել քաղաքական դաշտի դերակատարներին ու նրանց առանձնահատկությունները և փորձել ցույց տալ ընդդիմության պոտենցիալ հնարավորությունները: Հիմնվելով Լինսի և Ստեփանի

առաջադրած համախմբված ժողովրդավարության սահմանման վրա՝ կարելի է նշել, որ վարչակարգին հակադրվող դերակատար կարող է լինել հետևյալներից յուրաքանչյուրը. ազգ, սոցիալական խումբ, տնտեսական դերակատար, քաղաքական կուսակցություն կամ ինստիտուտ[1]: Նորմերի և դիրքերի մակարդակում ժողովրդավարական ընդդիմությունն առաջնորդվում է այն համոզմունքով, որ ցանկացած «քաղաքական փոփոխություն պետք է կատարվի ժողովրդավարական դոգմաների պարամետրերով»[2]: Այն դերակատարները, որոնք չեն կիսում այդ հայացքները, պետք է մեկուսացվեն և որևէ էական ազդեցություն չպետք է ունենան: Ինստիտուցիոնալ մակարդակում ընդդիմությունը պետք է գործի սահմանված, հայտնի, տարածված և ընդունելի ժողովրդավարական նորմերի համաձայն:

3. Ընդդիմություն, ժողովրդավարական և անցումային վարչակարգեր

Համեմատելով ժողովրդավարական և անցումային վարչակարգերի հիմնական առանձնահատկությունները՝ կարելի է զատորոշել ընդդիմության հիմնական տարբերությունները և, հետևաբար, նրա գործունեության այն ռազմավարական ու մարտավարական խնդիրները, որոնք նպատակաուղղված են անցումային վարչակարգերում ժողովրդավարական համախմբմանը:

Ելնելով Սխեմա 1-ում ուրվագծված առանձնահատկություններից՝ կարելի է նշել ժողովրդավարական քաղաքական ընդդիմության որոշ խնդիրներ և տարբեր տիպի վարչակարգերին բնորոշ որոշակի գծեր: Քանի որ անցումային վարչակարգում չի բացառվում իշխանության կողմից ուժի կիրառումը, այդ դեպքում ընդդիմությունը պետք է հայտարարի ժողովրդավարական ընտրական մրցակցության, ազատ և արդար ընտրությունների կազմակերպման անհրաժեշտության մասին՝ այն համարելով քաղաքական գործընթացին մասնակցելու և իշխանության համար պայքարի միակ ընդունելի ձև: Միևնույն ժամանակ, բացառելով բռնությունը որպես պայքարի ձև՝ ընդդիմադիր կուսակցությունները պետք է ընդդիմանան իշխանությանը և հրաժարվեն իշխանության կառույցների հետ գործարքներից: Բացի այդ, ոչ միայն ընդդիմությունը, այլև կառավարությունը պետք է բացառի իշխանության գործադրումն ինչպես իր, այնպես էլ արտաքին ուժերի կողմից:

Ընդհանրապես, ազատ և արդար ընտրություններն ունեն որոշակի չափանիշներ, ինչը լավագույնս ներկայացվել է Էլկլիտի կողմից[3]: Եվ ինչպես ճշմարտացիորեն նշվել է, այդ չափանիշները պետք է առկա լինեն ոչ միայն ընտրությունների օրը, այլև դրանից

[1] Տե՛ս Linz, Juan and Alfred Stepan, Problems of Democratic Transition and Consolidatoin: Southern Europe, South America, and Post-Communist Europe. Baltimore and London: The Jons Hopkins University press, 1996, p.4.
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 5:
[3] Տե՛ս Elklit, Jorgen, Electoral Institutional Change and Democratization: You Can Lead a Horse to Water, But You can Make it Drink, Democratization 6 (4), 1999, p. 28-51.

առաջ և հետո: Դա ենթադրում է, որ գործող իշխանությունը պատրաստ է ճանաչել ընտրությունների արդյունքները, հետևել քաղաքացիների կամքին, հարգել նրանց ընտրությունը, քաղաքական նախապատվությունը, իսկ ընդդիմությունը պետք է հստակ պատկերացում ունենա կառավարման մասին և անհրաժեշտ ռեսուրսներ ու ծրագիր՝ այն իրականացնելու համար:

Սխեմա 1

Ժողովրդավարական և անցումային վարչակարգերի համեմատությունը՝ վարչակարգի հիմնական առանձնահատկություններով

Վարչակարգի տիպը, առանձնահատկությունները	**Անցումային**	**Ժողովրդավարական**
Իշխանության փոփոխության ձևը	Ընտրություններ, պետ.հեղաշրջում, էլիտայի դաշինք	Ընտրություններ
Իշխող դերակատարների ներկայությունը	Մոնոցենտրիկ՝ պոլիցենտրիզմի տարրերով	Պոլիցենտրիկ
Պետական և ոչ պետական կառույցների միջև հարաբերությունները	Ոչ պետական ինստիտուտի ազդեցությունը դեռ առկա է *continuum*-ի գերիշխանությունում/հակակշիռ	Իրականացվում է իրավական և ժողովրդավարական նորմերով
Ընտրությունների բնույթը	Սովորաբար աջակցությունը կա, հաճախ ազատ, բայց ոչ արդար	Ազատ և արդար մրցակցություն
Ներկայացուցչական կառույցների դերը	Սահմանափակ ղեկավարվող պառլամենտ	Դերակատարների միջև համագործակցության հիմնական քաղաքական ինստիտուտ
Հիմնական քաղաքական կուսակցություններ	Իշխանության կուսակցությունը գոյություն ունի ի լրումն այն կուսակցությունների, որոնք որոշում ընդունելու, ներառյալ կառավարության քաղաքականության և կազմավորման վրա ոչ մի ազդեցություն չունեն	Կառավարության և դրա քաղաքականության ձևավորման գործում հիմնական որոշում ընդունող դերակատարներն են
ԶԼՄ կառավարում և դրանց պլյուրալիզմ	Հիմնական լրատվամիջոցները, հատկապես հեռուստատեսությունը, կառավարվում են, բայց չնայած պարբերական գրաքննությանը՝ ընդդիմությունը կարողանում է որոշ չափով օգտվել	ԶԼՄ պլյուրալիզմ

Մեկ այլ խնդիր է ժողովրդավարական հասարակությունում ընդդիմության կազմակերպված ինտեգրացիան, ինչը ենթադրում է քաղաքական կուսակցությունների առկայու-

թյուն: Կուսակցությունները դրսևորվում են առավելապես ոչ թե հիմնադիր առաջնորդի հարիզմով, այլև համեմատաբար երկարակյաց կազմակերպության առկայությամբ, որն ունի հայտնի գործընթացների սահմաններում ընդունված կայուն նորմեր, պատմություն, որոնք ընդունվում են այդ կազմակերպության անդամների կողմից, գաղափարախոսություն, տեղական ներկայացուցչություններ և այլն: Ի հավելումն այս չափանիշների՝ այն պետք է մշտական կապ և հաղորդակցման լծակներ ունենա քաղաքացիների հետ, որոնք ազդում են նոր նպատակների տարածման կամ եղածների վերհիշման վրա: Այս բոլոր առանձնահատկությունները թույլ են տալիս զատորոշել էլիտայի միավորներն այն կառուցվածքային ինստիտուտներից կամ կազմակերպություններից, որոնք կոչվում են կուսակցություններ: Ընդդիմության այս կառուցվածքային չափանիշներն ազդում են տվյալ քաղաքական համակարգում պոլիցենտրիզմի վրա: Այդ կենտրոնները կարող են և պետք է լինեն մեդիա և մեզոմակարդակում՝ կուսակցական պլյուրալիզմի տեսքով, որպես հասարակության մեջ տարակարծությունների արտահայտություն և որպես տարբեր հարցերի, կազմակերպական, խմբակային շահերի և, ընդհանրապես, պլյուրալիզմի արտահայտություն:

Կուսակցություններից զատ կան նաև շահերի խմբեր, և պարտադիր չէ, որ վերջիններս պայքարեն քաղաքական հեղինակության համար: Նրանք կարող են, կիրառելով քաղաքական տարբեր տեխնոլոգիաներ, ազդել քաղաքականության վրա: Պոլիցենտրիզմը (որն անպատճառորեն քաղաքական ընդդիմություն չի ենթադրում) պետք է առկա լինի նաև մակրոմակարդակում, ինչպես նաև ներկայացուցչական այլ ինստիտուտներում:

Կիսանախագահական կառավարման համակարգում ընդդիմության վերահսկողության հնարավորություններ, իհարկե, կան, հատկապես կառավարության, ինչպես նաև կառավարական պաշտոնյաների գործունեության որևէ մակարդակում: Ընդդիմության գործունեությունն այդ մակարդակում հիմնականներից է, հատկապես կառավարչական մարմիններում: Օրենսդրության սահմաններում, կուսակցության խմբակցության մակարդակում ընդդիմության գործունեությունը դառնում է միջոց:

Կառավարման մեկ այլ մեխանիզմ է ԶԼՄ-ն, որն իր գործունեության մեջ պետք է ազատ լինի: Ազատ լրատվամիջոցը կարևոր դեր է խաղում ընտրարշավի ընթացքում և առօրյա քաղաքական կյանքում: ԶԼՄ-ի դերը կարող է վճռական լինել ընտրությունների միջև ընկած ժամանակահատվածում: Ընդդիմության համար կարևոր են կառուցվածքայնորեն ամբողջական, միացյալ և ինստիտուցիոնալացված կերպով իշխանության համար մրցակցությունը և իշխանության իրականացման խնդիրները: Հնարավոր է այնպիսի տարբերակ, երբ անցումային վարչակարգում ընդդիմությունն իր առջև դնի ոչ թե ժողովրդավարական կոնսոլիդացման/համախմբման, այլ ավելի խիստ վարչակարգի ստեղծման խնդիր: Կամ, ցանկանալով լուծել առկա բազմազան խնդիրները, այն պատրաստ կլինի

զոհաբերել քաղաքական պլյուրալիզմը, որպեսզի լուծի ցանկացած տնտեսական և այլ՝ ոչ քաղաքական խնդիր: Ոչ ժողովրդավարական այսպիսի նպատակներ հետապնդող ընդդիմությունը կարող է ընդգրկել նախկին վարչակարգի հետևորդներին: Չպետք է մոռանալ, որ այս կուսակցությունները սովորաբար կառուցվածքայնորեն առավել ամբողջականության են ձգտում՝ շնորհիվ նախորդ վարչակարգից ժառանգած միավորների:

4. Ընդդիմություն. գործունեությունը, նպատակը

Ընդդիմության վերլուծությունը պետք է կենտրոնանա ոչ միայն ընդդիմության կառուցվածքի, այլև ընդդիմության գաղափարախոսության, քաղաքական կարևոր հարցերում նրա դերի և դիրքի, գործունեության և ճարտասանության վրա: Դա անհրաժեշտություն է ստեղծում ուսումնասիրել ոչ միայն կառուցվածքային հիմքերը, որի սահմաններում ընդդիմությունն իրականացնում է իր գործունեությունը, այլև ընդդիմության դերակատարների վարքը: Ելնելով Լինսի և Ստեփանի առաջարկած համախմբման եռամակարդակ մոդելից՝ կարելի է նշել, որ ուժերը նպատակ ունեն գալ իշխանության և հասնել իրենց նպատակներին միայն ժողովրդավարական քաղաքական գործընթացի սահմաններում[1]: Նրանց գործունեությունը կարող է լինել քաղաքական՝ մակրո, մեզո, միկրոմակարդակներում (պառլամենտ, կուսակցություններ, զանգվածներ) կամ ոչ քաղաքական՝ նպատակ ունենալով կազմավորել և միավորել տվյալ երկրում առկա այլ շահերը: Անցումային վարչակարգի առանձնահատկություններից է նաև այն, որ քաղաքական դաշտի չինստիտուցիոնալացվածության պայմաններում հարիզմատիկ անհատներն ուժեղ կուսակցության աջակցությամբ կամ առանց դրա, նույնպես կարող են հանդես գալ որպես ընդդիմություն «խաղացողներ», ինչը դրսևորվում է նաև Հայաստանում (չնայած այս երևույթն առկա է նաև զարգացած երկրներում: Օրինակ՝ Լը Պենը Ֆրանսիայում):

Ընդդիմությունը պետք է ձգտի ու կարողանա հասնել իշխանության և քաղաքական համակարգի զարգացումն ուղղի ժողովրդավարական համախմբման միայն ժողովրդավարական գործընթացի միջոցով: Ընդդիմության առաջնորդը պետք է ամրագրի այդ գործընթացը պաշտոնական փաստաթղթերում, իր ելույթներում ու գործողություններում, ինչն էլ պետք է հասկանալի ու ընդունելի լինի իր հետևորդների համար:

Ժողովրդավարական և անցումային վարչակարգերի միջև առկա տարբերությունները որոշ տարբերություններ են ենթադրում նաև ընտրությունների ընթացքում ընդդիմության գործելաձևում: Ժողովրդավարության դեպքում ընտրական մրցակցությունը նշանակալի է և ընդարձակ, մինչդեռ անցումային վարչակարգում այն առկա է այն չափով, որ

[1] Տե՛ս Linz, Juan and Alfred Stepan, Problems of Democratic Transition and Consolidatoin: Southern Europe, South America, and Post-Communist Europe. Baltimore and London: The Jons Hopkins University press, 1996, p. 7.

չափով որ ընդդիմությունը ջանում է ընդլայնել մրցակցության դաշտը՝ մեծացնելով այդ ոլորտը: Ժողովրդավարական համակարգում ընտրված պաշտոնյաների իշխանությունը սահմանափակ է, այն սահմանափակվում է իրավական նորմերով, մինչդեռ անցումային համակարգում այն կարող է սահմանափակվել ոչ միայն օրենքով, այլև «փակ գոտիներով»: Եթե ժողովրդավարական համակարգում նույնիսկ կան այդպիսի գոտիներ, իշխանության ղեկին գտնվողները պատասխանատու են և վերահսկվում են ընտրված պաշտոնյաների կողմից: Անցումային համակարգերում ժողովրդավարական ընդդիմության խնդիրը ոչ միայն այդպիսի գոտիների մատնանշումն է, այլև ընտրված ներկայացուցիչների միջոցով վերահսկողության չափի ընդլայնումը, ինչպես նաև առկա բաց տարածքների/ոլորտների պահպանումը:

Ժողովրդավարությունը ենթադրում է կուսակցական մրցակցություն, բայց անցումային վարչակարգերում այն կարող է սահմանափակվել, ինչն էլ պետք է ստիպի ընդդիմությանն առավել արդյունավետ օգտագործել գործելաձևի հնարավոր կիրառելի նորմերը՝ ներառյալ պառլամենտական բանավեճերը և այլն:

Ընդդիմությունը հանդուրժողական անցումային վարչակարգերում պետք է օգտվի առկա հնարավորություններից, օրինակ՝ լրատվամիջոցներից, և, հետևաբար, այլընտրանքային տեղեկատվության ու մեկնաբանությունների տարածումից: Այն կարող է նաև օգտագործել ազատ մրցակցության հնարավորությունը, ինչը կարող է խթանել կառավարության կողմից համագործակցության ցանկությունը՝ այդպիսով ընդլայնելով օրինականության և աջակցության հիմքերը: Այնուամենայնիվ, դա ընդդիմությանը դնում է երկընտրանքի առջև. պե՞տք է համագործակցել իշխող վարչակարգի հետ, թե ոչ, և եթե այո, ապա ի՞նչ չափով: Բացի այդ, առաջնորդների համագործակցությունն առաջին հերթին ընդդիմությունում կարող է դիտվել որպես դավաճանություն կուսակցության անդամների կողմից, ինչը կարող է բացասաբար անդրադառնալ ընդհանրապես ընդդիմության ընկալման վրա: Համագործակցության հարցի պատասխանը, որպես կանոն, կախված է մի շարք խնդիրներից և կարող է գնահատվել, արժևորվել ու մեկնաբանվել խաղի և կոալիցիայի տեսությունների բազմազանությամբ:

Կախված վարչակարգի տիպից՝ կտարբերվի և՛ ընդդիմության տիպը, և՛ գործունեության ոլորտները: Օգտագործելով ժողովրդավարության և ավտորիտարիզմի դիխոտոմիան, որտեղ իշխանության համար մրցակցության հնարավորությունը և ազատությունների օգտագործումը տատանվում են առավելագույնից նվազագույնի միջակայքում, կարելի է նշել վարչակարգի որոշ առանձնահատկություններ այն հնարավորությունների չափանիշներով, որոնք օգտագործվում են ընդդիմության կողմից գործունեության այն մակարդակով, որ նա դրսևորում է:

Այդ առանձնահատկությունները ներառում են ընդդիմության մասնակցության հնարավորությունն իշխանության համար մրցակցային պայքարին (ինչը անցումային վարչակարգերում սահմանափակվում է մեծապես ընտրությունների ժամանակ), ընդդիմության կառուցվածքային ամբողջականությունը (ինչը ցածր կամ համեմատաբար թույլ է անցումային վարչակարգերում), ընդդիմության նկատմամբ բռնության կիրառման չափը (բացառություններ կան նույնիսկ անցումային վարչակարգերում), ընդդիմության գործունեության մակարդակները և ոլորտը քաղաքացիական ու քաղաքական ազատությունների սահմաններում՝ աջակցության մոբիլիզացման հնարավորությունների հետ մեկտեղ:

Բացի այդ, վարչակարգը բնութագրելու այլ չափանիշներ նույնպես կարող են օգտագործվել՝ ներառյալ բոլոր սոցիալական խմբերի համար քաղաքական գործընթացին մասնակցելու առիթները և հնարավորություններ ստեղծելու չափանիշը: Ենթադրվում է, որ անցումային և, իհարկե, ավտորիտար համակարգերում արհեստական խոչընդոտներ են ստեղծվում որոշ խմբերի կամ դրանց քաղաքական շահերի կազմակերպված ներկայացման համար, ինչը կարող է վտանգ ներկայացնել իշխանության ղեկին գտնվողների համար: Սա անպատճառորեն չի նշանակում, որ ժողովրդավարական վարչակարգերում բոլոր խմբերը հավասարապես են ներկայացված, բայց բոլորն ունեն հնարավորություն մասնակցելու քաղաքական գործընթացին, և բոլոր հիմնական խմբերն ու շահերը հնարավորին չափ իդեալականորեն ներկայացված են: Մեկ այլ չափանիշ է ընտրված ներկայացուցչի լիազորությունների սահմանափակումների առկայությունը: Անցումային վարչակարգերում լիազորություններով օժտված անձինք փորձում են ապահովել իրենց լիազորությունների հաստատուն բնույթը:

Ժողովրդավարական համախմբման գործընթացը բնութագրվում է ոչ միայն ընդդիմության առկայությամբ, ինչն անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է, այլև դրական որակական առանձնահատկություններով և գծերով: Այն ընդդիմությունը, որը հռչակում է այնպիսի նպատակներ, որոնք տարբերվում են լիբերալ և ժողովրդավարական արժեքներից, և հետևում է դրանց իրագործմանը, երբեք չի աջակցի համախմբման գործընթացին: Ավելին, այսպիսի ընդդիմությունը կարող է ֆորմալ պատճառ հանդիսանալ ցանկացած ընդդիմության գործունեության դադարեցման և պլյուրալիստական համակարգում ընդդիմության ճնշման համար: Ուստի, անցումային կամ ժամանակավոր վարչակարգերում ընդդիմությունն ուսումնասիրելիս կարևոր է նկատել ոչ միայն դրա գոյությունը, այլև նրան բնորոշ հատկությունները, չափը և ընդգծել նրա ուժը: Սա կարող է ուսումնասիրվել և գնահատվել և՛ քանակական, և՛ որակական առումներով:

Ընդդիմության հետազոտումը պետք է ներառի ոչ միայն դրա ուժի և ֆորմալ կառույցների ուսումնասիրությունները, այլև արժեքների և համոզմունքների համակարգը,

ինչպես նաև դերակատարների վարքը, ինչը կարող է իր ազդեցությունը թողնել տվյալ ինստիտուտի վրա: Այն պետք է ընդգրկի նաև ընդդիմության՝ որպես որոշակի հասարակական խմբերի, հիմքերի և հնարավոր աջակցության աղբյուրների ուսումնասիրությունը: Այդ ուսումնասիրությունը նաև գործնական ենթատեքստ ունի, ըստ որի ժողովրդավարական ընդդիմությունը կարող է օգտագործել իր՝ հաճախ սահմանափակ ռեսուրսները հակադարձ կապով և կենտրոնանա հատուկ խմբերի վրա, որոնք լավ են վերաբերվում ժողովրդավարական արժեքներին, բայց կայուն նախապատվություններ չունեն և սպասում են «առաջարկի»: Ի հավելումն արժեքային ուսումնասիրությանը պետք է ուսումնասիրել նաև առկա պայմաններում հնարավոր ռազմավարությունները և հեռանկարները: Ուսումնասիրելով ընդդիմությունը որակական և քանակական առումներով՝ հնարավոր կլինի կանխագուշակել դրա բնույթը, ազդեցության ոլորտը և, հետևաբար, վարչակարգի զարգացման հնարավոր հետագիծը:

Անցումային վարչակարգերում ընդդիմությունը կարող է արտահայտել իր շահերը նույնիսկ սահմանափակ ընտրություններում (ի հակադրություն ազատ և արդար ընտրությունների): Այդ հնարավորության շնորհիվ որոշ գործողությունների միջոցով ընդդիմությունը կարող է խորացնել ժողովրդավարական միտումները որոշակի ոլորտներում: Դայմոնդի տեղական ժողովրդավարությանն աջակցելու և պայմանական համաձայնության բարձրացման փաստարկները բնականորեն կարող են կիրառվել այստեղ[1]: Առաջին հերթին ընդդիմությունը պետք է զգա, որ ինքը մշտապես չի վտարվում իշխանությունների կողմից և իր ասելիքն ունի քաղաքական իշխանության համար մրցակցության և, եթե հնարավոր է, ինչու չէ՝ նաև իրական ղեկավարման գործընթացում: Վերջինս կարող է արտահայտվել պառլամենտական գործունեությամբ: Պառլամենտական գործունեության ոլորտներից ընդդիմությանը հատկապես պետք է ներառել կառավարության լսումների, հարցադրումների գործընթացներին, ինչպես նաև հանձնաժողովների գործունեությանը՝ հնարավորություն ընձեռելով քննարկել առաջադրված օրինագծերը և այլընտրանք առաջարկել (ինչը ենթադրում է ընդդիմության քաղաքական պրոֆեսիոնալիզմի որոշակի մակարդակ): Այդ գործունեությունը ներառում է և՛ բանավեճերը՝ օրենսդրության սահմաններում, և՛ ԶԼՄ միջոցով առաջարկված այլընտրանքների մասին քաղաքացիներին ծանուցելը և այլն: Այս ազատությունները հետագայում կարող են ավելի մեծ աջակցություն ապահովել ընդդիմությանը, հատկապես, եթե ընդունված այլընտրանքը չի համապատասխանում քաղաքացիների շահերին:

Քաղաքական գործընթացներում ընդդիմության մշտական ակտիվությունը թույլ

[1] Այդ մասին մանրամասն տե՛ս Diamond Larry, Developing Democracy Toward Consolidation. Baltimore and London: The Jons Hopkins University Press, 1999.

կտա ընդլայնել աջակիցների բանակը՝ ազդելով և ներառելով նախկինում պասիվ անձանց, կամ էլ ակտիվներին վերակողմնորոշելով: Պառլամենտում ներկայացված լինելու դեպքում հնարավոր է ազդել պառլամենտի գործունեության և հատկապես պառլամենտական հանձնաժողովների վրա: Ընդդիմության առաջադրած այլընտրանքները նաև որպես թեստ կծառայեն իրենց ծրագրերի համար, և եթե անհրաժեշտ է, ընդդիմությունը պետք է կարողանա ուղղումներ կատարել դրանցում:

Ընդդիմության գործունեությունը կարող է նպաստել կոալիցիաների ձևավորմանը: Այս գաղափարը զարգացնելու դեպքում հնարավոր է առնվազն երկու հետևանք: Ներառված լինելով իշխանական կառույցներին՝ ընդդիմությունը կանգնում է երկընտրանքի առջև, քանզի մասնակցությունը կարող է գցել նրա հեղինակությունը: Մյուս կողմից՝ ներառված լինելով իշխանական կառույցներում, կոալիցիան կարող է ձևավորվել մերժման հիմքերի վրա՝ որպես բողոքական հատկություններ ունեցող կոալիցիա:

Ամփոփում

Ինչպես արդեն նշվել է, քաղաքական ընդդիմության գոյությունը ժողովրդավարության հիմնական և էական առանձնահատկություններից մեկն է: Այսինքն՝ համախմբված ժողովրդավարական համակարգը ենթադրում է ազատ մրցակցության, ինչպես նաև այլընտրանքային գաղափարախոսությունների և ծրագրերի առկայություն: Ավելին, տվյալ երկրում ժողովրդավարության մակարդակը կարելի է գնահատել գոյություն ունեցող ընդդիմության բնույթի և գործունեության վերլուծության միջոցով, ինչը կարող է չափվել, օրինակ, պլյուրալիզմի որոշակի մակարդակի առկայությամբ: Ինստիտուցիոնալացված ժողովրդավարական քաղաքական ընդդիմությունը համակարգում պետք է տարբերվի ոչ օրինական մեթոդների մերժումով, բարձր կազմակերպչական ամբողջականությամբ, զարգացած ենթամիավորներով, պահվածքի ֆորմալ և կայուն նորմերով, էլիտայի և աջակիցների վրա տարածվող այն արժեքների առկայությամբ, ովքեր իրենց նույնացնում են այդ կազմակերպչական միավորների հետ: Այն նաև պետք է տարբերվի տարածքային խտությամբ, երկարաժամկետ գոյությամբ, որը սահմանափակված չէ մի քանի ընտրաշրջանով, քաղաքական համակարգում ներառվածությամբ, որոշումների վրա ազդելու հնարավորություններով, աջակցության որոշակի մակարդակով և այդ աջակցությունը մոբիլիզացնելու ունակություններով, հստակ սոցիալական հիմքերով և կողմնորոշումներով:

Այսպիսով՝ ընդդիմությունը մրցում է իշխանության և քաղաքական որոշումներ կայացնելու գործընթացի վրա ազդեցություն ունենալու հնարավորությունների համար: Ընդդիմությունը դա անում է կառուցվածքային/կոնստրուկտիվ քննադատության և այլընտ-

բանքների առաջարկման միջոցով: Ընդդիմությունը պետք է արտահայտի շահեր, կապակցի դրանք, և եթե անհրաժեշտ է՝ լայն աջակցություն մոբիլիզացնի, ինչը թույլ կտա նրան ավելի մեծ ազդեցություն ունենալ հասարակական կարծիքի և իշխանությունների վրա: Այն կունենա նաև հանրայնացված գործառույթ՝ կրթելով քաղաքացիներին և ներառելով նրանց քաղաքական համակարգի ու քաղաքական գործընթացների մեջ:

Եթե երկրի իշխանությունը կարևորում է ընդդիմության դերը ներքին և արտաքին քաղաքականության մեջ, հարգում է նրանց հայացքները, պատրաստ է կիսել իշխանությունն այդ ուժերի հետ և ապահովում է ազատ ու արդար ընտրությունների անցկացումը, ապա կարելի է ասել, որ այդ պետությունում ոչ միայն ժողովրդավարական կարգեր են հաստատված, այլև կանխված է քաղաքացիական պատերազմի վտանգը: Կառավարությունը պետք է բավական ուժեղ լինի, որպեսզի երաշխավորի ազատ, արդար և ապահով մրցակցային դաշտ: Երբ կառավարությունը հրաժարվում է իրականացնել ժողովրդավարության այս հիմնական դրույթները, երբ ընդդիմությունն իրեն մեկուսացված, ճնշված, վտանգված կամ անապահով է զգում, այս դեպքում երկրի ներսում բախումները անխուսափելի են: Ընդդիմությունը պետք է կարողանա հասնել իշխանության և ուղղել համակարգի զարգացման ուղղությունը դեպի ժողովրդավարական համախմբում միայն ժողովրդավարական գործընթացների, նորմերի և արժեքների միջոցով: Սակայն հնարավոր է նաև այնպիսի տարբերակ, երբ անցումային վարչակարգում ընդդիմությունն իր առջև դնում է ոչ թե ժողովրդավարական համախմբման, այլ ավելի խիստ վարչակարգի ստեղծման խնդիրը: Ընդհանրապես ընդդիմության գործունեությունը չպետք է արգելվի: Եթե իշխանությունն ընդդիմությանը ճնշելու համար դիմում է ոչ օրինական հիմքերով ուժային միջոցների, ապա դրանով ցույց է տալիս իր թուլությունը:

Հայաստանը նախկին ԽՍՀՄ այն երկրներից է, որտեղ անցումը ժողովրդավարության ուղեկցվում էր խաղաղ ցույցերով: Անցումային գործընթացի սկիզբն այստեղ հանգիստ էր և համընթաց, սակայն հիմնական խնդիրը ղարաբաղյան հակամարտությունն էր: Այս և մի շարք քաղաքական, տնտեսական և սոցիալական խնդիրներ երկրում ճգնաժամային իրավիճակներ ստեղծեցին, որոնց ժամանակ երկրի իշխանությունը վարում էր ոչ ժողովրդավարական քաղաքականություն: Սկզբնական շրջանում ընդդիմությանը մեղադրելով այն ամենում, ինչում հնարավոր էր, իշխանությունը մասնակիորեն արգելում էր դրա գործունեությունը կամ էլ ուղղակի ձերբակալում նրա առաջնորդներին:

Եթե փորձենք տալ Հայաստանի ընդդիմության ընդհանուր բնութագիրը, ապա կարող ենք ասել, որ առայժմ առկա չէ ինստիտուցիոնալացված ժողովրդավարական քաղաքական ընդդիմություն. ընդդիմադիր ուժերի մեծ մասը չունի կազմակերպչական ամբողջականություն, զարգացած ենթամիավորներ, ֆորմալ և կայուն նորմեր, հստակ սո-

ցիալական հիմքեր և այլն: Սա մի կողմից կապված է այն հանգամանքի հետ, որ դեռևս ավարտված չէ ժողովրդավարացման գործընթացը, և, հետևաբար, ամբողջատիրական համակարգից ժողովրդավարության վերափոխման և համախմբման հաջող ավարտն անցումային համակարգում կարող է դիտարկվել և գնահատվել որպես առանձնահատուկ ինստիտուտ, որը գոյություն ունի քաղաքական համակարգի տարբեր մակարդակներում և ունի որոշակի կառուցվածք ու գործառույթներ: Մյուս կողմից էլ, իհարկե, սա գալիս է ընդդիմության ղեկավարների անձնական շահերի առաջնային դերից: Այսինքն՝ ընդդիմությունն իշխանության մեջ է ներգրավվում ոչ թե ժողովրդավարացման գործընթացը խթանելու համար, այլ ելնելով անձնական շահերից: Որպես կանոն, ընդդիմադիր միավորները, գալով իշխանության, երբեմն մոռանում են իրենց հռչակած արժեքների, նորմերի և գաղափարների մասին և դիրքերի ամրապնդման նպատակով համագործակցում են իշխանության ղեկին գտնվողների հետ՝ չկատարելով իրենց հիմնական գործառույթը, այն է՝ արտահայտել հակադիր/այլընտրանքային առաջարկներ, որոնց միջոցով հնարավոր կլինի գտնել մի շարք խնդիրների լուծման օպտիմալ տարբերակներ: